ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.02.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-01/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-01/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 22.01.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-01/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնել է, որ ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8/-ՃԿՊԱ-ՇՀԱՊՁԲ-14/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի N 1 չափաբաժնին մասնակցելու համար հայտ է ներկայացրել նաև «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն: «ՃԿՊԱ-ՇՀԱՊՁԲ-14/5» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստի ժամանակ, որը կայացել է 2014 հունվարի 16-ին ժամը 15:00-ին, հրապարակվել են N 1 չափաբաժնին մասնակցող ընկերությունների գնային առաջարկները, որոնք հետևյալն են՝

1. «Կոմպասս» ՍՊԸ – 245.000 ՀՀ դրամ,
2. «Էմ-Վի գրուպ» ՍՊԸ – 245.000 ՀՀ դրամ,
3. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ – 240.000 ՀՀ դրամ,
4. «Դայա» ՍՊԸ – 125.000 ՀՀ դրամ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2011թ. հունիսի 6-ի N 180-Լ հրամանով հաստատված «Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման» նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի 1-ին մասի, 7-րդ գլխի 7.1 կետի, բ. ենթակետի համաձայն՝ «նիստի արդյունքները հրապարակվում են բացված հայտերով ներկայացված գները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը: Պահանջի դեպքում հրապարակված գնային առաջարկների պատճեններն անհապաղ տրամադրվում են նման պահանջ ներկայացրած մասնակցին»:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովը խախտել է վերը նշված ընթացակարգը՝ հրաժարվելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Ռ. Վեդեցյանին տրամադրել մասնակից ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկների պատճենները՝ պատճառաբանելով, որ Պատվիրատուն պատճենները տրամադրելու համար պետք է կրի լրացուցիչ ծախսեր՝ թղթի, էլեկտրաէներգիայի և պատճենահանման սարքի մաշվածության համար: «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից նշված ընթացակարգի պահանջները կրկին ներկայացնելուց հետո, նրան առաջարկվել է գնային առաջարկների պատճենները ստանալու համար դիմել Պատվիրատուին համապատասխան գրավոր դիմումով:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, ղեկավարվելով նշված ընթացակարգի 1-ին մասի 7-րդ գլխի 7.1 կետի բ. ենթակետի դրույթներով, 17.01.2014թ. էլեկտրոնային փոստով ուղարկված համապատասխան նամակով, կրկին դիմել է գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով, թեկուզ էլեկտրոնային փոստով, անհապաղ տրամադրել նշված գնային առաջարկների սկան արված տարբերակները, սակայն վերը նշված պահանջն առանց որևէ հիմնավորման մնացել է չբավարարված:

Պատվիրատուի կողմից N 1 չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկների պատճենները «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին չտրամադրելը հանգեցրել է նրան, որ Ընկերության համար անհնարին է դարձել իրագործել գործող օրենսդրությամբ վերապահված իրավունքները և Ընկերությունը զրկվել է այլ մասնակիցների առաջարկներն ուսումնասիրելու և դրանց վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու հնարավորությունից:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գտնում է, որ այդ հանգամանքը ավելի քան կասկածելի է դառնում այն պարագայում, որ «Դայա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը պրակտիկորեն 2 անգամ ավելի էժան է, քան N 1 չափաբաժնով ներկայացված մնացած մասնակիցների առաջարկները: Նմանատիպ օրինաչափությունն ավելի վառ

արտահայտված է և մնացած 9 չափաբաժիններում: Մասնավորապես, բոլոր 10 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչված «Դայա» ՍՊԸ-ի գները ցածր են մնացած մասնակիցների գներից՝ 2-րդ չափաբաժնով՝ առնվազն 2 անգամ, 3-րդ չափաբաժնով՝ առնվազն 6 անգամ, 4-րդ չափաբաժնով՝ առնվազն 3 անգամ, 5-րդ չափաբաժնով՝ առնվազն 5 անգամ, 6-րդ չափաբաժնով՝ առնվազն 6 անգամ, 7-րդ չափաբաժնով՝ առնվազն 2 անգամ, 8-րդ չափաբաժնով՝ առնվազն 2 անգամ, 9-րդ չափաբաժնով՝ առնվազն 2 անգամ և 10-րդ չափաբաժնով՝ առնվազն 1.5 անգամ:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի պնդմամբ վերոնշյալ արդյունքների նույնիսկ մակերեսային վերլուծությունը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները՝

1. կամ բոլոր մասնակիցները (բացառությամբ «Դայա» ՍՊԸ-ի) գալով հանցավոր համաձայնության դիտավորյալ մի քանի անգամ բարձրացրել են իրենց գները,

2. կամ «Դայա» ՍՊԸ-ի կողմից առաջարկած սարքավորումներն իրենց տեխնիկական բնութագրերով բացարձակ չեն համապատասխանում «ՃԿՊԱ-ՇՀԱՊՁԲ-14/5» ընթացակարգով պահանջվող սարքավորումների մինիմալ տեխնիկական բնութագրերին, օգտագործված և վերականգնված, կամ էլ շինծու սարքավորումներ են: «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ելնելով այն փաստից, որ 1-ին չափաբաժնով պահանջվող և որպես նվազագույն տեխնիկական բնութագրեր ունեցող թվային պրոյեկտոր (Կետայնություն-native XGA (1,024x768/compr. UXGA (1,600x1,200) resolution, Պայծառություն–2,500 ANSI Lumens, Կոնտրաստ–2,000:1 և այլն) նշված է Mitsubishi EX-220U մակնիշի սարքավորումը և 2006թ. մինչ օրս Հայաստանում Mitsubishi EX-220U (Display Engineering) ընկերության միակ լիազորված դիստրիբյուտորը և սերվիս կենտրոնն է հանդիսանում հենց «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն և պաշտոնապես տեղեկացնում է, որ «Mitsubishi EX-220U» և նրա հետ նույն դասի թվային պրոյեկտորների գինը՝ ներառյալ ՀՀ մաքսային սահմանին մուծվող 32 տոկոս հարկերը, պարզապես չի կարող կազմել 125.000 ՀՀ դրամ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնման գործընթացի կազմակերպման մասին» կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու դեպքում՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովի կողմից որոշվում և հայտարարվում են ընտրված և երկրորդ ու երրորդ տեղերն զբաղեցրած մասնակիցները: Այսինքն, տվյալ ընթացակարգի կիրառման դեպքում հաղթող կազմակերպությունը որոշվում է հայտերի բացման նիստում:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման պահանջները, քանզի ս.թ. հունվարի 16-

ին ժամը 15:00-ին կայացած նիստի ընթացքում ընտրված և երկրորդ ու երրորդ տեղերն զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ որևիցե հայտարարություն չի կատարել: Արդյունքների մասին մասնակիցները տեղեկացվել են միայն ս.թ. հունվարի 20-ին աշխատանքային ժամերից դուրս (ժամը 19:54) ուղարկված էլեկտրոնային նամակով: Ընկերությունը մատնանշել է նաև այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովի 16.01.2014թ. N 2 արձանագրությամբ որպես արձանագրությունը կազմելու ժամ է նշված հենց 15:00-ն, որը համընկնում է հանձնաժողովի նիստի բացման ժամի հետ:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գտնում է, որ պատվիրատուն դիտավորյալ և ուղղակի խախտել է «Գնումների աջակման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2011թ. հունիսի 6-ի 180-Լ հրամանով հաստատված «Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման» նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի 1-ին մասի 7-րդ գլխի 7.1 կետի բ. ենթակետի պահանջները և ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետը՝ խնդրելով չեղյալ հայտարարել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8/ՃԿՊԱ-ՇՀԱՊՁԲ-14/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.01.2014թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 4.1 կետով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված և երկրորդ ու երրորդ տեղերն զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու որոշումը:

2. ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 24.01.2014թ. N 04/032-81 գրությամբ դիմել է ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 22.01.2014թ. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ը 03.02.2014թ. N 25/6 գրությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից 16.01.2014թ. կազմակերպված «ՃԿՊԱ-ՇՀԱՊՁԲ-14/5» ծածկագրով շրջանակային

համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգն անցկացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Հայտերի բացման ժամանակ ներկա է գտնվել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի լիազորված անձը, ով ականատես է եղել բացման ամբողջ ընթացքին, չնայած որ մասնակցել է միայն առաջին չափաբաժնին:

Պատվիրատուն նշել է, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման համաձայն «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին, ըստ իր ցանկության, ուսումնասիրելու համար տրամադրվել է այլ մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների պատճենները: Մասնակցին նաև առաջարկվել է գրավոր դիմում ներկայացնել և ստանալ ցանկալի պատճենները, չնայած այն հանգամանքին, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նիստից հետո մասնակիցներին պետք է տրամադրվեր համապատասխան արձանագրությունը, որտեղ նշվում է առաջին, երկրորդ և երրորդ տեղերն զբաղեցրած մասնակիցների անուններն ու առաջարկած գները:
ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ը նշել է նաև, որ հանձնաժողովը դեռ քննարկում է առաջին և երկրորդ տեղերն զբաղեցրած մասնակիցների առաջարկները և դեռևս հաղթող մասնակից չի որոշվել:

3. ԳԲԽ-01/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 22.01.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

4. ԳԲԽ-01/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-01/14 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 22.01.2014թ. ներկայացված բողոքը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8/-ՃԿՊԱ-ՇՀԱՊՁԲ-14/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 16.01.2014թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 2 և 23.01.2014թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 3 արձանագրությունները, ՀՀ ԱԻՆ

«Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից (այսուհետև՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին 03.02.2014թ. ներկայացված N 25/6 գրությունը և գրությանը կից փաստաթղթերը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ «Անուշ Պետրոսյանը»:

ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՃԿՊԱ-ՇՀԱՊՁԲ-14/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 16.01.2014թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 4.1 կետով որոշում է կայացվել «Դայա» ՍՊԸ-ին որպես առաջին տեղն զբաղեցնող մասնակից ճանաչել Ընթացակարգի 1-ից 10-րդ չափաբաժինների մասով, իսկ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին որպես երկրորդ տեղը զբաղեցնող՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն 22.01.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով խնդրել է չեղյալ հայտարարել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8/ՃԿՊԱ-ՇՀԱՊՁԲ-14/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.01.2014թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 4.1 կետով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված և երկրորդ ու երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու մասին որոշումը:

Սակայն, ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի 03.02.2014թ. N 25/6 գրությամբ Կենտրոնին ներկայացված Հանձնաժողովի 23.01.2014թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1-ին կետով Հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների հիման վրա որպես ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ ճանաչել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, իսկ «Դայա» ՍՊԸ-ին Ընթացակարգի 2-ից 10-րդ չափաբաժինների մասերով, քանի որ «Դայա» ՍՊԸ-ի

ներկայացրած նմուշը Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով չի համապատասխանել Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 22.01.2014թ. բողոքով Կենտրոնին ներկայացված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8/ՃԿՊԱ-ՇՀԱՊՁԲ-14/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.01.2014թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 4.1 կետով՝ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված և երկրորդ ու երրորդ տեղերն զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու որոշումը չեղյալ հայտարարելու պահանջը բողոքի քննության ընթացքում դարձել է առարկայազուրկ, քանի որ մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունելը Պատվիրատուի կողմից այն կատարվել է, ինչպես նաև հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը Գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 22.01.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Լուսինե Ոսկանյան

Անդամներ՝ Ավագ Ավագյան

Գևորգ Խաչատրյան